

Բանալի բառեր. արվեստ, գեղարվեստական հաղորդակցություն, ընկալող, հեղինակ, համահեղինակ, թվային տեխնոլոգիաներ, վիրտուալ իրականություն:

CHANGING THE NATURE OF ARTISTIC COMMUNICATION: FROM AVANT-GARDE TO DIGITAL ART

Svetlana Arzumanyan

*Candidate of Philosophical Sciences, Associate Professor
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article examines the problem of artistic communication, which has gradually changed its nature since the birth of avant-garde artistic trends and the use of electronic technologies in art, starting with television. In the traditionally established communication system “author-work-recipient”, the role of the recipient has undergone a significant transformation, which from a passive contemplator of the work has turned into an active co-creator of the artistic reality being created “here and now” with his help. The tendency of involving the recipient in the creative process has intensified even more during the formation of experimental artistic practices related to digital technologies and human entry into the virtual world. This has created new opportunities for the transformation of an ordinary consumer of art, not having professional skills, into a creator of an artistic reality open to further transformations.

Key words: art, artistic communication, recipient, author, co-creation, digital technologies, virtual reality.

**ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԱՆՀԱՅՏ ՆՇԱՆՆԵՐԻ ՈՒ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Ս.**

**ՕԳՈՍՏԻՆՈՍԻ «ՄՐԲԱԶԱՆ
ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ**

Ռոմիկ Քոչարյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվ. գիտահետազոտական
ինստիտուտի ավագ գիտաշխատող*

1. Ս. Օգոստինոսի մեկնահայեցակարգին ներհատուկ է տեսա-գործնական երկբաղադրություն ու երկմիասնություն՝ իրենում ներհայտելով, որպես տեսական, **«Մրբազան Հերմենևտիկայի»**

(Մրբազան Մեկնագիտության)» **հայեցակարգ** և, որպես գործնական, «**Էկզեգետիկա (գիտամեկնություն)**»։ Նրա «Քրիստոնեական գիտություն» երկում «Մրբազան Հերմենևտիկայի» հայեցակարգը ներկայացված «Էկզեգետիկայի» հետ միահյուսվածությամբ։ «Օգոստինոսն... ինքն իրեն առաջադրել էր խնդիր՝ Սուրբ Գրոց նկատմամբ հավատի միջոցով հասնել նրանում բովանդակյալ իմաստության բանահասությանը», – գրում է Է. Ժիլսոնը¹։ Արդ՝ ս. Օգոստինոսի մեկնագիտության ու գիտամեկնության՝ միմյանց փոխներթափանց միահյուս գորակցությամբ ներկայացող տեսագործականորեն ամբողջական մեկնահայեցակարգի կոչումն ու ըստ այդմ՝ կատարումը՝ դիտավորությունը, կերպարանումն ու իրագործումն է՝ հավատի ու մտքի փոխներգործուն փոխգորակցությամբ հասնել Սուրբ Գրեքում բովանդակյալ իմաստության բանահասությանը (հասկացմանը)։ Եվ նրա Էկզեգետիկան (գիտամեկնությունը) ներկայանում է որպես Սուրբ Գրոց համապատումի նկատմամբ իր հերմենևտիկական (մեկնագիտական) տեսության **ընդհանուր կիրառություն** և որոշ առանձնապատումներում **կոնկրետ կիրառությամբ**՝ դրանց խորհրդանշանակ բովանդակության մեկնորոշում։ Մասնագիտական գրականությունում ս. Օգոստինոսի մեկնագիտական (հերմենևտիկական) հայեցակարգը հայտորոշվում ու բնորոշվում է առավելաչափ իր իսկ կիրառության մեջ իմացահայտող մեկնուղիով՝ հենց գիտամեկնության (Էկզեգետիկայի) ուսումնասիրությամբ²։ Ոչ ամեննին հակադրությամբ, այլ ի նախադրություն և ի լրումն այդտեսակ հետազոտությունների, ըստ՝ նրա հերմենևտիկայի ուսումնասիրությունն իրագործվում է՝ հետևելով հին հույն իմաստասիրությունից և կոնկրետորեն՝ հենց Արիստոտելից ուսյալ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկում

¹ Жильсон Э., Философия в средние века, Изд. Культурная революция, Республика, М., 2010, с. 96.

² Օգոստինոսի մեկնագիտական (հերմենևտիկական) հայեցակարգն իր իսկ կիրառության մեկնուղիով՝ Էկզեգետիկայի միջոցով իմացահայտող այդտեսակ ուսումնասիրության ուշագրավ կերպօրինակ է Բերտրան դե Մարթերիի աշխատությունը՝ որպես Սուրբ Գրոց համապատումը բաղկացնող որոշ խորհրդապատումների ուղղաբանող ու այլաբանող միահյուս **նշանակությունների** գիտամեկնություն իր կերպառությամբ (տե՛ս **Bertrand de Margerie**, An Introduction to the History of Exegesis, vol: 1 – Saint Augustine, Saint Bede's Publication, Petersham, Massachusetts, 1993).

ներկայացված առավել հիմնարար ու էապես տարբերակվող հնարավորությանը³:

Նրա հերմենևտիկայի իսկությունը բացորոշելու համար հարկ է հարցադրել և մեկնողաբար հատկորոշել նրա մեկնահայեցակարգի ուսումնասիրության **առարկան** և **կատարումը**: Արդ՝ ինչպիսի՞ն է նրա «Քրիստոնեական գիտություն» երկի, որում և ներկայացվող «Մրբազան հերմենևտիկայի» ուսումնասիրության առարկան: «Յուրաքանչյուր գիտություն զբաղվում է կամ **իրերով** (res⁴), կամ իրերը նշանակող **նշաններով**»⁵, – գրում է նա: Արդ՝ որո՞նք են իրերը, և որո՞նք են նշանները, և ինչպե՞ս են դրանք տարբերակվում նրա մեկնագիտական ուսմունքում: Ինչպիսի՞ ինչ են «իրերն ինքնին», այլ ոչ թե՝ ի՞նչ կարող են նրանք նաև նշանակել իրենցից բացի, հարցադրությունը, մտադիտարկումն ու քննա-խորհրդածությունն Օգոստինոսն իրագործում է իր «Քրիստոնեական գիտություն» աշխատության առաջին գլխում⁶: Մեկնագիտությանը նվիրված իր աշխատության առաջին գլխում նա մեկնագիտության ուսումնասիրության առարկան սահմանում ու դասակարգում է իրերի ու նշանների, երկուստեք սահմանելով ու բնորոշելով: Մեկնագիտության ուսումնասիրության ենթակա բազմաբովանդակ առարկայական տիրույթն իմացահայտելով որպես «իրեր» ու «նշաններ», առաջնահերթորեն՝ երեք սեռի «իրերում»

³ **Դավիթ Անյադո**, Սահմանք իմաստասիրության – Երկասիրությունը փիլիսոփայականք, Եր., 1980, աշխատասիրությամբ Ս. Արևշատյանի, էջ 46, 48 և 50-51:

⁴ Տե՛ս լատիներեն տեքստին զուգադիր անգլերեն թարգմանությամբ՝ **Augustine**, De Doctrina Christiana (On Christian Teaching), ed. and trans. by R.P. H. Green, Clarendon Press, Oxford University Press, New York, 1995, էջ 13:

⁵ Նույն տեղում, էջ 15:

⁶ Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգի ուսումնասիրության առարկայի երկբաղադրությունում՝ տարբորոշված որպես «իրեր» ու «նշաններ», «իրերի» բնության քննա-հասկացումն ու մեկնորոշումը տե՛ս **Քոչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի «Մրբազան Մեկնագիտության» ուսումնասիրության առաջնային ու գերագույն առարկան (Աստվածաշնչում Հակոբի ու Մանվելի հարցին հրեշտակի պատասխանի իմաստության խորհուրդի քննա-համեմատական մեկնորոշմամբ) – *Էջմիածին*, Եր., էջ 23-48. **Քոչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի «Մրբազան մեկնագիտության» հայեցակարգում ուսումնասիրության ենթակա բովանդակ առարկայում երկրորդ և երրորդ դասի առարկաները – Փիլիսոփայությունը արդի աշխարհում, գ. IX, Եր., «Եվրոպրինտ» հրատ., 2019, էջ 88-107. **Քոչարյան Ռ.**, Սիրո չորս առարկաները Ս. Օգոստինոսի «Մրբազան մեկնագիտության» հայեցակարգում – «Հայ հասարակության զարգացման հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում. մարտահրավերներն ու դրանց լուծումները», գիտական հոդվածների ժողովածու, Եր., «Եվրոպրինտ» հրատ., 2019, էջ 63-83):

հատկորոշում է այն, ինչ իրենք էությամբ են իրենցում, այլ ոչ այն, ինչ այդ «իրերը» գորունակ են նշանակել: «Իրերի» իր հասկացությունը մեկնորոշելով՝ նա գրում է. «...նրանցում հարկ է որոնել միայն այն, թե ինչ (էություն) են իրենք իրենցում, այլ՝ ոչ այն, թե ինչ ևս կարող են նշանակել»⁷: Օգոստինոսը որպես «իրեր» հասկանում է այնպիսիք, որոնք զուտ, միմիայն ու պարզաբար իրենք իրենց և ոչ այլ ինչ են նշանակում ու ցուցանում: «Աստ՝ իր (res) որպես այդպիսին ես անվանում եմ այն, ինչն ինքն իրենով չի գործածվում նշանակելու համար որևէ այլ բան, օրինակ՝ փայտ, քար, կենդանի»⁸: Մեկնագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթի՝ նրա այսկերպ բացորոշման առնչությամբ կարելի է ասել, որ *«ամենայն իր է որպես նշան՝ ինքնանշան, իրեն իսկ կենսահայտող ու ճանաչահայտող: Եվ ամենայն նշան է որպես իր՝ իրենով իսկ այլ իր ևս նշանակող»*⁹: Ընդհանրապես, «...միջին դարերում լայն տարածված տեսակետ էր, որ ամենայն իրեր և իրադարձություններ հենց նշաններ են, որոնցով Աստված կամենում է որևէ բան հայտնել մեզ»¹⁰: Սուրբ հայրը գրում է. «ամենայն նշան նաև իր է, մինչդեռ որն իր չէ, անգոյ (ոչինչ) է, և, սակայն, ոչ ամենայն իր է նշան»¹¹: Ահավասիկ, մեկնագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթը կազմող «իրերն» ու «նշանները» միմյանցից փոխտարորոշելիս՝ Օգոստինոսը որպես «իրեր» նկատի ունի իրենով այլ որևէ բան չնշանակող, այլ միմիայն հենց իրեն հայտնացուցող գոյավորը: Եվ այնուամենայնիվ, այդկերպ՝ նա երկդաս տարորոշում է նաև հենց իրերը՝ միմիայն ինքնանշանակ, այսինքն՝ լոկ իրեն նշանակող, և-կամ այլանշանակ ևս, այսինքն՝ իրենից տարբեր իր ևս իրենով նշանակող:

⁷ **Августин Блаженный**, Христианская наука, или Основания. св. Герменевтики и церковного красноречия, Киев, 1835, с. 67:

⁸ Նույն տեղում, էջ 15:

⁹ Տե՛ս **Քոչարյան Ռ.**, Ս. Օգոստինոսի «Սրբազան Մեկնագիտության» ուսումնասիրության առաջնային ու գերագույն առարկան (Աստվածաշնչում Հակոբի ու Մանվելի հարցին հրեշտակի պատասխանի իմաստության խորհուրդի քննա-համեմատական մեկնորոշմամբ) – *Էքզիստենցիա*, Եր., էջ 36:

¹⁰ **Гутнер Г. Б.**, Философия языка, “Изд. УРАО”, М., в 3-х частях, ч. 3, с. 4.

¹¹ **Августин Блаженный**, Христианская наука, или Основания. св. Герменевтики и церковного красноречия, Киев, 1835, с. 16, հմմտ. **Augustine**, De Doctrina Christiana (On Christian Teaching), ed. and trans. by R.P. H. Green, Clarendon Press. Oxford University Press, New York, 1995, p. 14.

Քանզի երբեմն միննույն իրերը ծառայում են նաև որպես նշաններ այլ իրեր նշանակելու համար, ինչպես օրինակ՝ այն փայտը, որով ըստ Գրոց, Մովսեսը քաղցրացրեց Մեռայի դառը ջրերը (Ելից, ԺԵ, 23-25), այն քարը, որը Հակոբը դրեց իր սնարին (Ծննդոց, 28, 11), այն կենդանին, որին Աբրահամը զոհ մատուցեց իր որդու փոխարեն (Ծննդոց, 22, 13)»¹²:

Ընդ որում, վերոնշյալ փայտը, որ և ցույց տվեց Տեր Աստված՝ ի պատասխան Իրեն ուղղված Մովսեսի աղաղակին (աղոթքին), որը և Մովսեսը ջրի մեջ արկմամբ, քաղցրության փոխարկեց Մեռայի ջրերի դառնությունը, խորհրդանշանն է կենաց փայտի՝ սուրբ Խաչի: Ս. Գրիգոր Նարեկացին իր աղոթամատյանում գրում է. «Որ զՄեռային դառնություն իբր մտաց անհավանություն, Կենացն փայտի ի քեզ յարմարեալ՝ պիտանի արարեր»¹³: Նարեկացու այս մեկնությամբ նկատելի է, որ աստվածաշնչյան այդ տողերում ոչ միայն *փայտն* է մի իր, որ ծառայում է որպես նշան՝ այլ իր (*կենաց փայտը և որ նույնն է՝ Սուրբ Խաչը*) նշանակելու համար, այլև Մեռայի *ջրերի դառնությունն* է նշան՝ ժողովրդի կողմից Մովսեսին արտահայտած տրտունջի մեջ *մարդկային մտքերի անհավանությունը* նշանակելու համար, և փայտի միջոցով ջրերի դառնության փոխարկումը *քաղցրության*՝ նույնպես նշան է, որ և նշանակում է մարդկային մտքի անհավանության փոխարկումը մտքի մեկ այլ ներքին զորության ու որպիսության՝ *հիմնացյալ* առ Աստված հավատի, հույսի ու սիրո, *ապավինությամբ ու վստահությամբ*՝ ի Տեր, *օգտակար ու պիտանի* մարդկային ինքնության՝ առ Աստված կյանքի բարի կարգավորության ու կատարելագործության:

2. Իսկ արդեն իր աշխատության երկրորդ գլխում մեկնագիտության ուսումնասիրության առարկայի բաղադրակազմում Օգոստինոսը հատկորոշում է նաև «նշանները»¹⁴: Աստ՝ նրա քննա-խորհրդածության

¹² **Августин Блаженный**, Христианская наука, или Основания. св. Гермeneвтики и церковнаго красноречія, Киев, 1835, էջ 15:

¹³ **Գրիգոր Նարեկացի**, Մատեն Թղերգութեան, ՀՄՄՀ ԳԱ ՀՐԱՏ., Եր., 1985, Բան ԿԳ, 25-26տ., էջ 496:

¹⁴ Օգոստինոսի մեկնագիտության ուսումնասիրության առարկայի երկրադադրությունում «նշանների» վերաբերյալ տե՛ս նաև **Неретина С., Огурцов А.**, Пути к универсалиям, изд. РХГА (Русской Христианской гуманитарной академии), СПб., 2006, с. 176-243.

խնդրո նյութը «նշաններն» են՝ ոչ այն, թե ինչ են «նշաններն» իրենք իրենցում, այլ միայն այն, ինչ նշանակյալ է իրենցով¹⁵, այսինքն՝ թե ինչ կարող են նրանք նաև նշանակել իրենցից բացի: Նա սահմանում է. «Նշանն առհասարակ իր է, որը մեր զգայարաններին ներգործող իր սեփական որպիսությունից վերադիր՝ պատճառում է այլ որևէ ինչ ևս ներհայտել մեր մտքում»¹⁶:

Հիրավի, ամենայն իրեր ճանաչվում են դրանք արտահայտող նշանների միջոցով: Քանզի, ինչպես նշում է փիլիսոփայական հերմենևտիկայի ռափիրա՝ Հ.-Գ. Գադամերը, «մարդը գործ ունի ոչ թե արարչության առաջին օրվա աշխարհի, այլ արդեն մշակույթով, լեզվով մեկնված և իրեն հաղորդվող աշխարհի հետ: Աշխարհը մարդու համար որպես աշխարհ է այնքանով, որքանով որ ներկա է նրա նկատմամբ, իսկ ներկա է՝ լեզվով և մշակույթով իր մեկնվածությամբ»¹⁷: Ըստ Վ. Ֆոն Հումբոլտի ու նաև Հ.-Գ. Գադամերի, լեզվում և-կամ լեզվով արդեն իսկ ի հայտ է աշխարհը մարդու համար: «Երբեք այդ աշխարհը առաջին օրվա սկզբնական աշխարհը չէ»¹⁸: «Արդարև, մարդու կեցողությունը նույնական չէ իր արարման առաջին օրվան, և լեզվում արդեն բովանդակյալ է մարդկության կողմից ժամանակի մեջ փորձառյալ աշխարհի գոյության իմաստներ, և արդ՝ մարդկային իմացությունն իր սկզբնաբայլերն ու ողջ ընթացքն իրագործում է համաշխարհի՝ լեզվականորեն ու մշակութորեն փորձառյալ իմաստների ծիրում»¹⁹:

Ըստ Օգոստինոսի մեկնագիտական հայեցակարգի, նշանները երկու սեռի են՝ **բնական** և **արհեստական** (կամ պայմանական): Որոշնք են բնական նշանները: **Բնական նշաններն** իրենցում ինքնանշանակությունից՝ իրենց վերաբերյալ պատկերացում ընձեռնելուց կամ ինքնահայտանշումից բացի, իրենցով իսկ առաջացնում են մեզանում ու հայտանշում այլ իրի վերաբերյալ՝ ոչ որևիցե ոքու կամահաճությամբ առհայտելով ու իմացատրելով այդ այլանշա-

¹⁵ St' u **Августин Блаженный**, Христианская наука, или Основания св. Гермениетики и церковного красноречия, Киев, 1835, էջ 67:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ **Քոչարյան Ռ.**, Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, Եր., 2006, էջ 179-180, 208, տե՛ս նաև էջ 35-36:

¹⁸ **Գադամեր Դ.-Դ.**, Философия и герменевтика – **Гадамер Դ.-Դ.**, Актуальность прекрасного, "Искусство", М., с. 14.

¹⁹ **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինթոն», Եր., 2016, էջ 389:

նակությունը: Բնական նշանների պարագայում նշողի ու նշանակյալի կապը կայանում է ոչ երբևէ մարդկային կամայականությամբ ինքնակամորեն կապակցմամբ, այլ հենց իրերի միջև առկա բնական կապակցվածությամբ և հայտիմաց է միմիայն դիտումով ու փորձով, գործիմակ՝ ծուխը՝ իրեն գոյապատճառող կրակով, հետքատեղը՝ անցած գազանով, մարդու զայրացած կամ տրտմած տեսքն առանց որևիցե ներքին իր ցանկության՝ իմացահայտելու իր ներքին վշտալի վիճակը և այլն²⁰:

Իսկ որո՞նք են արհեստական (կամ պայմանական) նշանները: **«Պայմանական նշանները** նրանք են, որոնցով կենդանի էակները փոխադարձ համաձայնությամբ արտահայտում են իրենց հոգեկան շարժումները, զգացմունքներն ու մտքերը»²¹: Պայմանական նշանների կիրառության նպատակն է՝ հաղորդել ու այլոց հոգում տպավորել այն, ինչ կա նշանատուի մոտքում²²: Պայմանական կամ արհեստածին նշանները բնական նշանների հետ համատեղ՝ նույնպես գործածական են մարդկանց մեջ: Եվ աստ՝ մեկնագիտության բովանդակ առարկայի երկբաղադրությունից նրա քննա-խորհրդածության խնդրո նյութ են ներկայանում առավելաչափ հենց պայմանական նշանները, քանզի Սուրբ Գրքում բովանդակյալ ի վերուստ տրված պայմանանշաններն սս գրվել ու հաղորդվել են հենց մարդկանց միջոցով²³: Օգոստինոսը տարրորշում է նաև պայմանական նշանները՝ ըստ մարդկային զգայությունների: Նշանները, որոնցով մարդիկ փոխադարձաբար արտահայտում են իրենց ներանձնականի ամենայն շարժը, զգացումներն ու մտքերը, ինչ-որ քանակով վերաբերում են տեսողությանը, մեծաքանակությամբ՝ լսողությանը և առավելաչափ սակավությամբ՝ այլ զգայություններին²⁴: Մարդկային բնությանը, գոյությանն ու փոխգործառնությանը սկզբունքորեն ներհատուկ իրենց բնությով արհեստական և-կամ արհեստածին ձայնային նշանները՝ լսողությանն առնչվող, կազմում են բազմաքանակ դաս և, անշուշտ, դրանք կարող են լինել նաև երաժշտականորեն նշանակալի և-կամ

²⁰ St' u **Августин Блаженный**, Христiанская наука, или Основанiя св. Гермeneвтики и церковнаго красноречiя, Киев, 1835, էջ 68:

²¹ Նույն տեղում, էջ 69:

²² St' u նույն տեղը:

²³ St' u նույն տեղը:

²⁴ St' u նույն տեղը, էջ 70:

ագդանշանային, սակայն, քանակորեն գերազանց են իրենց բնույթով **բառային նշանները**²⁵: Մարդկային գործառնությունում սուրբ հայրը նաև ընդգծում է պայմանական բնույթի բառային նշանների առավելությունը վերոնշյալ այլատեսակ պայմանական նշանների համեմատ էական այն հավելումով, որ թեև ամենայն դրանք բառերով հնարավոր է վերարտահայտել, սակայն, հակառակը՝ դրանցով լիանշանակ վերարտահայտել բառերը իրեն անհնարին է նկատվում սկզբունքորեն²⁶:

Մարդկային խոսքն ու դրանում ամենայն բառ իրենց գոյությունում **հնչյունակազմ** ու **հնչունային բնությամբ** են: Եվ մարդկային խոսքի ամենայն բառերն իրենց հնչյունակազմ ու հնչունաբնույթ գոյությունում օղը տատանելով՝ նույնժամայն անհետանում են և տևական են սոսկ այնչափ, որչափ և իրենց հնչյունը, ուստի և դրանց ժամանակահոս ու վաղանցուկ լինելությունը փոխակերպելով նյութեղինացնում ու հաստատագրում են տառերով²⁷: Ընդ որում, բառերն աչքերին ի տես են ամեննին էլ ոչ իրենք իրենցով ու հենց իրենց **հնչյունային** իսկույններն անհետացող վաղանցուկ բնությամբ ու գոյությամբ, այլ իրենց հայտանշող **տառերով**: Իսկ աստ՝ հարկ է նաև նկատի ունենալ, որ բառային պայմանական նշանները, որ և իրենցով նշում են **մտային բովանդակություն**, ունեն իրենց նշանակային բարդություններն այն պատճառով, որ **մարդիկ տարաձայնում են ոչ միայն իրենց մտքերում, այլև նույնիսկ բառերում**: Արդարև, մարդկային էակներն արարչագործությունից ի վեր՝ դրախտում իրենց սկզբնագոյությունում առաջնահերթորեն տարաձայնելով Աստծուն իրենց մտքերում ու գործում, այնուհետ՝ աշտարակաշինությանն ի պատասխան լեզվաբաժանության աստվածային պատժախորհրդով տարաձայնեցին նաև միմյանց փոխառնչվող իրենց մտքերում ու խոսքերում: Ոչ միայն դրախտում մարդու պատվիրանազանցության խորհրդապատում սկզբնագոյությունում, այլև Նոյի հետ Աստծո ուխտին անհավատ ու տարաձայն՝ համաշխարհային մահասփիռ ջրհեղեղի ժամանակամերձ հիշողությամբ նույնակերպ մահագույժ վտանգի հնարավոր կրկնությունից զերծանելու և այդ տագնապալի

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 71:

²⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 71-72:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 72:

միտքն անգամ լուծանելու՝ այլևս ոչ աստվածահավատ ու աստվածահույս ապավինությամբ և ոչ ամեննին առաքինացյալ ինքնությամբ ու աստվածահաճո կյանքով, այլ միմիայն մարդկային հնարամտությամբ ու ինքնահույս, անձնապատասխան ու գոռոզամիտ աշտարակաշինությամբ իրենց ինքնապահովության մտակարծությանն ու գործին՝ աստվածային նախախնամության խորհրդանշանակ պատժին արժանանացյալ հանկարծահաս լեզվաբաժանությունից ի վեր՝ մարդիկ Աստծուն իրենց տարաձայնության հետևանքով նաև հենց միմյանց տարաձայնեցին ոչ սոսկ իրենց մտքերում, այլև բառերում²⁸: Կարելի է նկատել, որ Օգոստինոսը հայտորոշելով նշանի ու իրենով նշանակյալի կապի տարաբնույթ՝ բնական լեզուներում սկզբունքորեն առկա ու հնարավոր բարդությունները, դրանով իսկ նախապատրաստում է մեկնագիտության ուսումնասիրության առարկայի՝ Սուրբ Գրքերում ասացյալի հնարավոր բազմանշանակության վերաբերյալ դրույթը և ապա՝ առարկայի բազմանշանակ որպիսությանն աղեկվատությամբ՝ արդեն նաև Սուրբ Գրոց ստույգ իմաստի հասկացմանն ու մեկնությանը նպատակամետ մեկնագիտության ընդհանուր կանոնների սկզբունքների ու մեթոդների իր բացորոշումը:

Մարդկության բազմալեզու համայն աշխարհով համասփիռ ազգերի տարագոյության իրողությամբ պայմանավորված, Սուրբ Գիրքը, որ և ըստ ամենայն սուրբ հայրերի ու նաև ս. Օգոստինոսի՝ բժշկում է մարդկային հոգու բազում հիվանդությունները, գրյալ ի մի գիր՝ համայն աշխարհով տարածվելու ընդունակ, սկզբունքային անհրաժեշտությամբ հարկ էր փոխադրել և այլ լեզուների՝ ի փրկություն ամենայն ազգերի: Իսկ Սուրբ Գրոց ընթերցողն ամենայն այդ մատյաններում որոնում է մատենագիր ընտրյալ անձանց **մտքերն ու կամքը**, ըստ որոնց և՛ Աստծո Ճշմարտությունը ու բարեուսույց, փրկարար **իմաստության խորհուրդն ու կամքը**: «Աստծո խոսքն ի փրկություն իրենց ընթերցողները ոչինչ առավել չեն կամենում, քան միմիայն գտանել Սուրբ Գրոց մատենագիրների մտքերն ու կամքը և այդկերպ՝ հենց Աստծո կամքը, ըստ որի և խոսել են ամենայն Աստվածաներշնչված Մատենագիրները»²⁹: Իսկ Սուրբ Գրերի

²⁸ Տե՛ս նույն տեղը:

²⁹ Նույն տեղում, էջ 73:

անքննախոհ ու անպատշաճ կերպով ոմանց ընթերցանությունը խաթարում ու հենց ինքնախաբեության է մատնում իրենց իսկ ու նաև իրենց ունկնդիր այլոց մտքի որոնումը՝ բազում *մթին* կամ *մթնահայտ* տեղիներում իմաստները փոխշփոթելով և-կամ ամենևին իմաստ չգտանելով³⁰։ Ըստ Օգոստինոսի, Աստվածաշունչ Մատյանում որևոր տեղիներում ամենայն մթնահայտը այլ տեղիներում ասվել է նաև լիովին պարզահայտ. «Այդ մթնությունը համարյա ոչինչ չի ծածկում իրենում այնպիսին, որ չլինի բացված ամենապարզ կերպով Սուրբ Գրոց այլ տեղիներում»³¹։ Այնուամենայնիվ, Սուրբ Գրեքում և՛ պարզահայտ, և՛ մթնահայտ ասման կերպերն ամենևին էլ անխորհուրդ ու աննպատակ չեն։ Տեսա-իմացական գորությունը տարակերպ է բնահատուկ ու ներկրթյալ մարդկային բանական հոգում։ «Ով միշտ չի գտնում այն, ինչ որոնում է, տառապում ու թախծում է հոգևոր քաղցից, իսկ ով երբեք չի փնտրում, քանզի ամենայն ունի պատրաստի, ձանձրությից ու անգործությունից թառամում է։ Երկտեսակ այդ դեպքերում հարկ է զգուշանալ հոգեկան ուժերի լիովին հյուծման վտանգից»³²։ Ահավասիկ, Սուրբ Գրեքի տարակերպ ու երկտեսակ ասման նպատակային պատճառն այն է, որպեսզի նախախնամության իմաստուն խորհուրդով Աստվածաշունչ Մատյանի որևոր տեղիներում ասելիքի *պարզահայտության* միջոցով ընթերցողի *բանական հոգու* տեսա-գործնական իմաստնացման *հոգևոր կարոտությանն ընձեռելով որոնելին ու փափագելին*, զերծանի անխորհրդահասու *հուսահատությունից* և բարեկերպի հոգեռդորկ ու հոգեպայծառ բարեհարգարության³³։ Իսկ երբեմն առավել դժվարահասու *մթնահայտի* դիտավորությունն է՝ ստույգ իմաստի որոնումի ու հասկացման դժվարությամբ *խոնարհության ներկրթելով մարդկային հպարտությունն ու գոռոզամտությունը*՝ ընթերցող անձանց բանախորհությունը զերծանի անփութությունից և նույնիսկ քամահ-բանքից։ Քանզի Սուրբ Գրոց ընթերցողների մեջ կան և անձինք, որոնք ի դեմս Գրոց բանագրյալ խորհրդապատում իմաստի հարադեպ ակներևության ու դյուրահայտության՝ երկուստեք և՛ իրենց հոգեկան ապրումներում՝ հոգեձանձրության և իրենց բանախորհությունում՝ մտածանձ-

³⁰ Տե՛ս նույն տեղը։

³¹ Նույն տեղում, էջ 76։

³² Նույն տեղում։

³³ Տե՛ս նույն տեղը։

րության անփութությամբ անկարևոր ու քամահրանքի արժանի են համարում և, որպես առավելագույն հոգևոր զանձ, իրենցում չեն ներանձնում ու իրենց կենսակերպում մշտատև ու մշտակա չեն կենսագործում այդչափ դյուրամատչելի ամենայն իմաստահայտություն ու խորհրդիմացություն³⁴:

3. Մեկնագիտական իր աշխատության երկրորդ գլխում մտքի հետևողական առաջընթացությամբ սահմանելով ու դասակարգելով նաև նշանները՝ որպես բնական ու պայմանական և ապա՝ յուրաքանչյուրը ևս սահմանելով ու բնորոշելով, այնուհետ՝ Օգոստինոսը քննախորհրդածում է *նշանի ու նշանակալի կապը*, պարզահայտ (կամ դյուրահայտ) և մթնահայտ տեղիների նշանակալին կառուցակարգով, որով և հայտորոշում Սուրբ Գրեքում ասացյալի *բանահասության* (իմա՝ *հասկացման*) հնարավորությունը, այսինքն՝ ասացյալում իսկական իմաստի բացահայտման եղանակը: Նա հայտանշում է Սուրբ Գրոց խորհրդապատումների անհասկանալիության պատճառը, հատկորոշելով այն որպես *անհայտ նշաններ*, կամ որպես պարզորեն *նշանների չիմացություն*, կամ որպես այդ նշանների արդեն բուն *նշանակությունների անորոշություն*, և իր մեկնագիտական աշխատության երկրորդ գլխում նաև մանրամասն հայտորոշում դրանց հաղթահարման և ստույգ բանահասության համար էական ու որոշակի նախիմացության անհրաժեշտ ու նախընտրելի միջոցները: Ըստ նրա, «ամենայն երկ անհասկանալի է լինում երկու պատճառով՝ կամ *որոշ նշանների լիովին չիմացությունից*, կամ դրանց *նշանակությունների անորոշությունից*: Իսկ ամենայն նշաններն ունեն *սեփական* կամ *փոխաբերական* նշանակություններ»³⁵, նույնն է թե ասել՝ ուղղաբանող կամ այլաբանող նշանակություններ³⁶: Եվ

³⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 73-74:

³⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 86. մեջբերումն ուղղված է ևս երկու հրատարակությունների տեքստերի հետ համեմատությամբ, լատիներեն տեքստին զուգադիր անգլերեն թարգմանության՝ **Augustine**, De Doctrina Christiana (On Christian Teaching), ed. and trans. by R.P. H. Green, Clarendon Press/Oxford University Press, New York, 1995, p. 71, ինչպես նաև՝ **Aurelius Augustine**, On Christian doctrine, transl. by prof. J. F. Shaw – The works of Aurelius Augustine, Bishop of Hippo, A new transl., ed. by Rev. Marcus Dods, DD, vol. IX Edinburgh, 1873, p. 43:

³⁶ Օգոստինոսի մեկնագիտության ուսումնասիրության առարկայի՝ «իրերի» ու «նշանների» երկբաղադրությունում ոչ լիարժեք համակազմությամբ երկուստեք՝ «նշանների» ու իրենց «նշանակությունների», այլ որպես միմիայն

սեփական նշանակությունը նշանի՝ որնիցե առարկա նշանակելն է, որի համար և ստեղծվել է: Իսկ **փոխաբերական նշանակությունը** լինում է այնժամ, երբ նշանի սեփական նշանակությամբ նշվող առարկաներն են գործածվում այլ բան նշանակելու համար³⁷: Օրինակ՝ Սուրբ Գրոց այն մտքում, թե՝ «Ոչ կապեսցես զգոռկ եզին կալտոյ» (Կորնթ. Ա, 9), «եզ» բառի սեփական ու հենց ուղղաբանող նշանակությունը հայտնի կենդանու նշանա-հայտումն է, իսկ փոխաբերական նշանակությունը Սուրբ Գրքում Պողոս առաքյալի մեկնորոշմամբ այլաբանորեն նշանահայտում է Աստծո խոսքը քարոզող անձին³⁸:

4. Հստ Օգոստինոսի, Սուրբ Գրոց ընթերցողի հասկացմանը կարող են խոչընդոտել ու նույնիսկ այն խափանել և՛ առաջնահերթորեն՝ հենց **նշանների**, և՛ այնուհետ՝ արդեն նաև ուղղաբանող կամ այլաբանող **նշանակությունների անհայտ լինելը**՝ պարզորեն չիմացությունը կամ թերիմացությունը: Հասկացմանը խոչընդոտող անհայտ ուղղաբանող նշանները, եթե դրանք բառանշաններ են, լինում են երկտեսակ՝ անհայտ բառանշան կամ անհայտ ասույթ (նախադասություն, դարձվածք, locution – ասույթ)³⁹: Արդ՝ անհայտ ու հենց ուղղաբանող իմաստով բառանշանների ու ասույթների հասկացման լավագույն միջոցը **լեզվի** իմացությունն է՝ ժամանակի ու կարողության պարագայում լեզվի անձամբ ուսումնառությամբ, կամ լեզվիմաց այլոց հետ խորհրդակցությամբ⁴⁰, կամ տարբեր թարգմանությունների փոխհամեմատությամբ, որոնցով իմացահայտելի են բազում մթին տեղիներ Աստվածաշնչում⁴¹: Իր «Խոստովանություն» հանրահայտ երկից ամենայն ուսումնասիրողներին իմացահայտ՝ իր սեփական փորձառությամբ համոզված ու հմտացած է նա զրույց, որ նույնիսկ

«նշանակությունների» գիտամեկնություն տե՛ս **Bertrand de Margerie**, An Introduction to the History of Exegesis, vol: 1 – Saint Augustine, Saint Bede's Publication, Petersham, Massachusetts, 1993:

³⁷ Տե՛ս **Августин Блаженный**, Христианская наука, или Основания св. Гермениевтики и церковного красноречия, Киев, 1835, էջ 86:

³⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 86. «Միթե՞ զեզա՞նց ինչ փոյթ էր Աստուծոյ: Ո՞չ ապաքէն վասն մեր ասէ, քանզի վասն մեր գրեցաւ. Ձի յուսով պարտի որ սերմանէ՛ն սերմանել, և որ կատուն՝ յուսով վայելել» (Կորնթ. Ա, 9-10):

³⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 96-97:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 97:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, էջ 88, 98:

սեփական լեզվում են գտնվում մեզ անհայտ բառանշաններ կամ ամբողջական ասույթներ, որ և իրենց ուշագրավությամբ առավելապիսի հիշարժան՝ հարկ է մտապահել ու ջանալ հաճախակի հանդիպել ընթերցանությունում ու խոսքում, հարադեպորեն իմացական ու մտապատրաստ լինելով ու պահելով՝ բացահայտել ճշմարիտ իմաստը, օրինակ՝ անմիջական հարցմամբ բանիմաց ու գիտակ անձին և-կամ նրանց երկերից գտանելով՝ որպես իմացահայտելի տվյալ բառանշանի ու ասույթի նախաշարադրանքից, կամ ետշարադրանքից, կամ երկուստեք՝ համաշարադրանքից⁴²:

Օգոստինոսն ինքն է իր «Խոստովանություն»-ում հավաստում իր հաղորդ ու ընկալ լինելը Սուրբ Գրոց մատյանների իմաստապատումներում ու խորհրդապատումներում բովանդակյալ իմաստներին ու իմաստությանն առավելաչափ լատիներեն լեզվի միջոցով՝ ի համեմատ այլ լեզուների⁴³: Եվ իր իսկ փորձառությամբ իմացազետ Սուրբ Գրոց լատիներեն թարգմանությունների միջև նշանակալի տարբերություններին՝ ս. Օգոստինոսը լատինալեզու ուսումնասերների՝ Աստվածաշնչի առավել բանահասության համար հարկավոր է համարում ևս երկու լեզուների՝ եբրայերենի և հունարենի, իմացությունը⁴⁴: Պատճառը երկուստեք՝ և՛ լատիներեն բազում թարգմանություններն են, և՛ Սուրբ Գրերում հաճախակի գործածվող՝ չթարգմանվող որոշ բառերի առկայությունը՝ պայմանավորված ոչ միշտ դրանց սկզբունքորեն անթարգմանելիությամբ, այլև այդ բառերի նկատմամբ վերաբերմունքում սրբազան հարգանքով⁴⁵: Իսկ լատիներեն թարգմանությունների թերություններն ուղղելու համար նա նշում է հունարեն բնօրինակները, Նոր Կտակարանի պարագայում՝ Սուրբ Հոգու կամքով ու առաջնորդությամբ միախորհուրդ ու միասնաձայն շնորհով ներշնչմամբ՝ Եկեղեցիների առավելահմուտ ու իմաստնազետ

⁴² Տե՛ս նույն տեղը:

⁴³ Տե՛ս **Аврелий Августин**, Исповедь, изд. «Ренессанс», М., 1991: Այս մասին մանրամասն տես նաև **Burton Ph.**, Augustine and Language – A companion to Augustine, Ed. by Mark Vessey with the assistance of Shelley Reid, John Wiley & Sons, Ltd., Publication, 2012, էջ 115-116:

⁴⁴ Տե՛ս **Августин Блаженный**, Христианская наука, или Основания св. Гермениевтики и церковного красноречия, Киев, 1835, էջ 87:

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 87-88:

բանիմացությամբ ընդունված տեքստը⁴⁶, իսկ Հին Կտակարանի պարագայում՝ գերադասելով Յոթանասնից թարգմանությունը, այսինքն՝ փոխհամեմատված թարգմանությունը յոթանասուն անձանց կողմից, որ և արժանացել էին Սուրբ Հոգու ներշնչմանը, ըստ այդ հարցում գիտակ եկեղեցիների համընդհանուր տեսակետի, քանզի Սուրբ Գրոց թարգմանության ողջ ընթացքում լինելով առանձին սենյակներում, նրանց թարգմանություններում առկա էր փոխհամաձայնություն ոչ լոկ բառերի, այլև բառատեղերի⁴⁷: Եվ եթե Յոթանասնից թարգմանությունում կարող էին լինել ինչ-ինչ տարբերություններ եբրայերենի համեմատ, ապա այդ նույնպես Սուրբ Հոգու կամքով ու առաջնորդությամբ՝ շնորհելով յոթանասուն մեկնիչներին միախորհուրդ ու միասնաձայն՝ իրենց թարգմանությունների ինչ-ինչ տեղիներում նկատի ունենալ նաև հեթանոսների վիճակը՝ ի տարբերություն հրեաների⁴⁸:

Սուրբ Գրոց բազում թարգմանություններն, ըստ Օգոստինոսի, հարկ է դիտարկել ոչ թե բացասականորեն որպես հասկացման հնարավոր խառնաշփոթության աղբյուր, այլ հենց դրականորեն, քանզի դրանք կարող են նաև օգնել ջանասեր ու ամեննին ոչ-ծույլ ընթեցողին՝ բնօրինակում երկիմաստության հնարավորություն ընձեռող ասացյալի՝ երբեմն լոկ ուղղաբանորեն կամ այլաբանորեն թարգմանող իմաստների պարզ համեմատությամբ Սուրբ Գրոց մթնահայտ տեղիների բուն ու ստույգ իմաստի հասկացման⁴⁹: Եվ սակայն, հնարավոր են ոչ միայն աստվածաշունչ գրերի բնօրինակի երկիմաստության՝ թարգմանությունում լոկ ուղղաբանող և-կամ այլաբանող բառիմաստներ, այլև ասացյալի բուն իմաստի՝ թարգմանչի թյուրհասկացում և արդեն Հեղինակի՝ Աստծո, դիտավորությանն ու մտքին անհամակերպ ու տարամիտ՝ ոչ այլևս մթնահայտ, այլ՝ հենց սխալ թարգմանություն, որ և կարող է չնկատվել ուսումնասերի՝ բնօրինակի լեզվի չիմացությամբ կամ թերիմացությամբ⁵⁰: Ըստ Օգոստինոսի, ընթերցողը հարկ է լինի կամ հին եբրայերենին ու հին հունարենին գիտակ, կամ օգտվի առավել բառացի

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 101:

⁴⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 98-99 և 100:

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 99-100:

⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 88:

⁵⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 91- 92:

թարգմանություններից, եթե անգամ դրանցում, ի նպաստ ստույգ հասկացման, լինեն թարգմանվող լեզվի անսովոր գործածություններ (բառաստեղծում և-կամ բառակապակցում), որ թեև կարող են երբեմն նույնորոշվել որպես բարբարիզմ՝ օտար կամ գոեհկաբան, ու հենց լեզվի անմաքրություն և, սակայն, այդպիսի լեզվախախտումն անկարևոր է բուն իսկության հասկացման ձգտողին, քանզի լեզվի մաքրությունն ինքնին՝ այդկերպ խախտման ենթակա, ոչ այլ ինչ է, եթե ոչ միմիայն նախնյաց (ըստ իս՝ իրենց հերթին նույնպես իսկությանը հետամուտ, բանահասու ու բանահայտ, այսինքն՝ հասկացող ու մեկնահայտող) լեզվագործածության նախօրինակ կերպին՝ հետագա սերունդների հարգարժանության տուրք և ընդօրինակություն⁵¹: Եվ անշուշտ, կան նաև **ոմանք, որ առավել կամ սակավ վիրավորվում են լեզվի անմաքրությունից, որում և համարյա միշտ իրենք սակավագետ են և, սովորաբար, սակավագետ են՝ որչափ և ցանկանում են գիտուն երևալ**՝ ոչ իրերի իսկության գիտությունում, որ խրատուսույց է մարդկանց, այլ լեզվանշանների գիտությունում, որում համարյա անհնար է չթյուրագիտել կամ չանգիտանալ, երբ նույնիսկ իրերի իսկության իմացությունն է մեզ գոռոզամտացնում, եթե խոնարհ չենք Տիրոջ քաղցր լուծին⁵²: Ինչպես և ս. Պողոս առաքյալն է գրում. **«Եթե ոք կամենում է որևիցե ինչ գիտենալ՝ ոչ ևս գիտեցալ որպես է արժան այն գիտենալ: Բայց ով սիրում է Աստծուն, նա է տեղեկացալ լինում Նրանից»** (Կորնթ. Ը, 2-3), և ապա՝ առաքյալի այդ մտքից ուսյալ՝ ս. Գրիգոր Տղան է գրում, «Եթե մի ոք ասի, թե որևէ մասն գիտի (մասն-ագետ է – մեկնակիրարկող այս հավելումը և ընդգծումները՝ Ռ. Ք.), գիտի՞, արդյոք, ինչպես պիտո էր (այն) գիտենալ»:

5. Իսկ եթե Սուրբ Գրոց ընթերցողի հասկացմանը խոչընդոտում ու նույնիսկ այն խափանում են անհայտ այն նշանները, որ և հենց անհայտ են իրենցով նշանակյալ այլաբանող **նշանակություններով**, ապա հասկացման համար հարկավոր է երկուստեք մասերով և՛ լեզվի, և՛ դրանցով նշանակյալ առարկաների իմացությունը⁵³: Հիրավի, լեզվիմացությամբ անհայտ լեզվանշանների ու իրենց այլաբանող նշանակության մեկնորոշումը հասկանալ է ընձեռում

⁵¹ Տե՛ս նույն տեղը, էջ 93-94:

⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 94:

⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 101:

Աստվածաշնչում հարադեպ նույնիսկ անուններում բովանդակյալ ու հենց մթնահայտ իմաստության խորհուրդներ: Քանզի Նոր Կտակարանում կան բառեր ու անուններ, որոնք և իրենցով նշանակյալ ունեն որևոր գաղտնախորհուրդներ՝ ընթերցողին պարզորոշվող հենց Ավետարանիչների բացատրությամբ, և ուրեմն՝ «ս. հեղինակների կողմից չբացատրվող բազում եբրայերեն բառերի իմացությունն անգամ, եթե որևիցե մի ոք ի գործու լինի դրանց նշանահայտության՝ ըստ հարկի բացատրության, մեծապես կնպաստի Սուրբ Գրոց բազմաթիվ գաղտնիքների լուծմանը»⁵⁴:

Ըստ Օգոստինոսի, ոչ միայն անհայտ լեզվանշանների, այլև այդ լեզվանշաններով նշանակյալ իրերի ու դրանց բնահատկությունների իմացությունը մեկնորոշել է ընձեռում Սուրբ Գրոց խորհրդապատում տեղիներում ու հենց խորհրդաբանող մտքերում բովանդակյալ մթնահայտ թաքնախորհուրդները: Քանզի եթե ընթերցողը չզիտի բուն իրերի՝ Աստվածաշունչ Մատյանում նշվող երկրների ու քաղաքների աշխարհագրական դիրքերի և առավել ևս՝ հայտնի կենդանիների, քարերի, ծառերի, բույսերի... հատկությունները՝ իրենց որևիցե նմանությամբ վերին ու հոգևոր իրերին, ապա անհրաժեշտորեն մթնահայտ ու դժվարին է դառնում հասկանալ Սուրբ Գրոց բոլոր այն պատկերավոր արտահայտությունները, որոնցում և դրանք հիշատակվում են⁵⁵, և սկզբունքորեն անթույլատրելի է այդ ամենը դիտարկել ու կիրառել իբրև նշաններ՝ մարդկային միտքն ու վարքը որևէ կերպ ու չափ ներկրթող սնտիպապաշտության⁵⁶:

Արդ՝ մարդկության կյանքում նաև հեթանոսական ժամանակաշրջանի համայն մշակույթից՝ և՛ գիտամշակույթից արվեստամշակույթից, արհեստամշակույթից ու կենսամշակույթից ավանդյալ երկրների աշխարհարգության, քարերի, բույսերի ծառերի, կենդանիների հատկությունների, մարդկային ինքնության ու կյանքի որպիսության ուսումնասիրություններ ներկայացող գիտություններից ևս անհրաժեշտորեն ու նախընտրելիորեն պիտոյական է ուսումնառել ամենայն օգտակարը Սուրբ Գրոց մթնահայտ տեղիների հասկացման համար: Վերոասացյալը հավաստում է նաև միջնադարագետ ու

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 102 և 103, 133:

⁵⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 133:

մեկնագետ Ռ. Ա. Մարկուսի միտքը. «Օգոստինոսի Քրիստոնեական գիտություն աշխատության երկրորդ գլուխը նվիրված է այն սկզբունքների քննարկմանը, որոնց հիմնվելով քրիստոնեությունը կարող է ընդունել և կիրառել դասական անտիկի մշակույթը»⁵⁷:

6. *Սուրբ հայրը կոչում ու ներկրթում է ամենքին հոգևոր արթնության՝ որպես ամենայն ճշմարտության աղբյուր հենց Իրեն Աստծուն ճանաչել և ուսանել.* «Ընդհակառակը, բարի ու իսկական քրիստոնյան հարկ է իմանա. ճշմարտություն ուրևուր նա գտանի՝ *պատկանությունն է Աստծո* (ընդգծումը՝ Ռ.Ք.), և Սուրբ Գրքում խոստովանելով ու ընդունելով իսկությունը՝ նա պարտավոր է մերժել սնոտի հորինվածքները, ափսոսել ու զգուշանալ այն մարդկանցից, որ և «Ճանաչեցին Աստծուն և ոչ որպես Աստված փառավորեցին կամ գոհացան, այլ՝ անձնատուր ունայնացյալ իրենց խորհուրդներով՝ խավարեցին և նրանց սրտերն անմտությամբ: Իրենց իմաստուններ կարծելով՝ հիմարացան: Եվ փոխեցին անեղծ Աստծո փառքը՝ նմանության եղծանելի պատկերի մարդկանց և թռչունների և չորքոտանիների և սողունների» (Հռոմ., Ա, 21-23)»⁵⁸: Պողոս առաքյալի թղթից մեջբերյալ՝ տեսա-իմացական և կենսա-գործնական իմաստության բարեխրատության խորհրդուսույց վերոբերյալ մտքի խորունկ նշանակությունը մեկնողաբար բացորոշելով ս. Օգոստինոսը նշավակում է մարդկանց հեթանոսական կռապաշտությունը և սնոտիաբարո անմտությունն ու կեցողությունը: Քանզի *ճշմարտությունն ու բարին*՝ միմիայն Աստծուն արժանին և հենց աստվածապատկան աստվածայինը, վերագրել բնաշխարհի տարրերին, մարդկանց ու կենդանիներին՝ որպես դերաստվածություն և հենց կուռք ու չաստված, այդ իսկ է մարդկային հոգևոր կեցողության ու բարոյականության անկում, սին կամ սնոտի հավատալիք ու անմտություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն գիտական հոդվածում ներկայացվում է նշանի սահմանումն ու մեկնորոշումը ս. Օգոստինոսի «Մրբազան հերմենևտիկայի»

⁵⁷ **Markus R. A.**, Marius Victorinus and Augustine – The Cambridge history of later greek and early medieval philosophy, ed. by Armstrong A.H., Cambridge University Press, New York, 2008, p. 347.

⁵⁸ **Августин Блаженный**, Христианская наука, или Основания св. Гермeneвтики и церковного красноречія, Киев, 1835, էջ 110-111:

ուսումնասիրության առարկայում: Սուրբ հայրը նշում է, որ «Սուրբ Գրոց» ընթերցողն ու մեկնաբանը իմաստության բանահասության (հասկացման) խնդրում հաճախ կարող են առնչվել անհայտ նշանների ու իրենց ուղղաբանող ու այլաբանող նշանակությունների: Ուստի և իր Քրիստոնեական գիտություն աշխատությունում մշակելով «Սրբազան Հերմենևտիկայի» իր հայեցակարգը, Աստվածաշնչի մեկնաբանին ու հասկացման ձգտող ամենայն ընթերցողներին ի օգնություն՝ հանգամանորեն իմացահայտում է անհայտ նշանների ու իրենց նշանակությունների հասկացման միջոցները:

Բանալի բառեր. «Սրբազան Հերմենևտիկա», հասկացում, մեկնորոշում, առարկայական տիրույթ, նշան, նշանակություն:

РАЗЛИЧЕНИЕ ЗНАКОВ И СРЕДСТВА РАЗУМЕНИЯ НЕИЗВЕСТНЫХ ЗНАКОВ И ЗНАЧЕНИЙ В КОНЦЕПЦИИ “СВЯЩЕННОЙ ГЕРМЕНЕВТИКИ” СВ. АВГУСТИНА

Ромик Кочарян

*Кандидат философских наук, доцент,
Старший научный сотрудник Научно-исследовательского института
древних рукописей “Матенадаран” им. М. Маишотца*

РЕЗЮМЕ

В научной статье представлены определение и интерпретация «знака» св. Августином в предмете исследования своей концепции “Священной Герменевтики”. Святой отец отмечает, что истолкователю и читателю в проблеме разумения премудрости Святого Писания часто могут встречаться неизвестные знаки и их собственные или переносные значения. Посему, он в своём трактате “Христианская наука” разрабатывая свою концепцию “Священной Герменевтики” в помощь истолкователю и всем читателям Святого Писания, обстоятельно разъясняет средства разумения неизвестных знаков и их значений.

Ключевые слова: “Священная Герменевтика”, понимание, истолкование, предмет исследования, знак, значение.

DISTINCTION OF SIGNS AND MEANS OF UNDERSTANDING OF UNKNOWN SIGNS AND MEANINGS IN THE CONCEPTION OF “SACRED HERMENEUTICS” ST. AUGUSTINE

Romik Kocharyan

Candidate of Political Sciences, Associate Professor

SUMMARY

The scientific article presents the definition and interpretation of the sign by St. Augustine in the subject of research of his conception of “Sacred Hermeneutics”. The Holy Father notes that the interpreter and reader in the problem of understanding wisdom of Holy Scripture can often come across unknown signs and their own or figurative meanings. Therefore, in his treatise “Christian Science”, developing his conception of “Sacred Hermeneutics” to help the interpreter and all readers of Holy Scripture, he explains in detail the means of understanding unknown signs and their meanings.

Key words: “SACRED HERMENEUTICS” (“Hermeneutica sacra”), understanding, interpretation, subject of research, sign, meaning.

ԳԵՂԵՑԻԿԻ՝ ԻՐԲԵՎ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Արմեն Օսիպյան

*ՀՀ ԳԱՍ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի լաբորանտ*

Գեղեցիկը՝ իբրև լայնորեն տարածված և բազմաբովանդակ երևույթ, որն իր ուրույն տեղն ունի բնության և հասարակության ոլորտում, ամենայն իրավամբ հանդիսանում է գեղագիտության կարևորագույն կատեգորիա: Ծնունդ առնելով անտիկ, և, դեռ ավելի վաղ՝ Հին Արևելքի ժամանակաշրջանում, վերոհիշյալ գեղագիտական հասկացությունը, այնուամենայնիվ, իր գիտական բովանդակությունն ու զարգացումն է ստացել Հելլադայում՝ Հին Հունաստանում: Ինչպես նշում է XX դարի հանրաճանաչ հայ գեղագետ Վ. Ա. Հովսեփյանը (Օսիպյանը), «...Հելլադան եղել է այն երկիրը, որտեղ գեղեցիկը և արվեստը ուսումնասիրող գիտությունը բարձրացվել է տեսական մակարդակի»¹:

Անվիճելի է գեղեցիկի կատեգորիալ բնույթը և նրա առանցքային դերն ու նշանակությունը գեղագիտական այլ կատեգորիաների շար-

¹ **Հովսեփյան Վ. Ա.**, Գեղագիտական ուսմունքների պատմություն, ԵՊՀ հրատ., Ե., 1979, էջ 5: